Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-907-03.09.2024-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2004 թվականի նոյեմբերի 9-ի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի (այսուհետեւ՝ Օրենսգիրք) 5-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասից հանել «Աշխատանքի ընդունման, ինչպես նաեւ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին անհատական իրավական ակտի մեկ օրինակը հանձնվում է աշխատողին այն ընդունելուց հետո՝ երեք օրվա ընթացքում:» նախադասությունը.

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4.1-ին մասով՝

«4.1. Աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին անհատական իրավական ակտն աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգի միջոցով ընդունելուց հետո՝ երեք օրվա ընթացքում ակտի օրինակն աշխատանքային պայմանագրում սահմանված ծանուցման եղանակով ուղարկվում է աշխատողին:»:

3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4.2-րդ մասով՝

«4.2. Եթե աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին անհատական իրավական ակտն աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգի միջոցով չի ընդունվում, ապա ակտի մեկ օրինակը հանձնվում է աշխատողին այն ընդունելուց հետո՝ երեք օրվա ընթացքում:»:

4) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4.3-րդ մասով՝

«4.3. Սույն օրենսգրքի 13-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաեւ 14-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում աշխատանքի ընդունման, ինչպես նաեւ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին անհատական իրավական ակտի մեկ օրինակը հանձնվում է աշխատողին այն ընդունելուց հետո՝ երեք օրվա ընթացքում:»:

Հոդված 2. Օրենսգրքի 13-րդ հոդվածի՝

1) 1-ին պարբերության «Աշխատանքային» բառից առաջ լրացնել «1.» թիվը.

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 2-րդ մասով.

«2. Աշխատանքային հարաբերությունների ծագումը, փոփոխումը եւ դադարումը կարող է իրականացվել նաեւ թվային համակարգի միջոցով:»:

3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Աշխատանքային հարաբերությունների ծագումը, փոփոխումը եւ դադարումն իրականացվում է թվային համակարգի միջոցով, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաեւ սույն օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի:»:

4) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Եթե պետական մարմիններում առանձին պաշտոնների վերաբերյալ տեղեկությունների հրապարակման սահմանափակումներով պայմանավորված անձին վերաբերող տեղեկություններն օրենսդրությամբ սահմանված են որպես գաղտնի կամ սահմանափակ տարածման ծառայողական տեղեկություններ, ապա վերջիններիս հետ աշխատանքային հարաբերությունների ծագումը, փոփոխումը եւ դադարումն իրանականացվում է գրավոր՝ թղթային եղանակով:»:

Հոդված 3. Օրենսգրքի 14-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով» բառերը փոխարինել «, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի» բառերով.

2) 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ՝

«Սույն օրենսգրքի 13-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքում աշխատողի եւ գործատուի միջեւ աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով:»:

3) 1.1-ին մասում «Աշխատանքային հարաբերությունները համարվում են ծագած Հայաստանի Հանրապետությունում, եթե աշխատանքային պայմանագիրը կնքվել, կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտն ընդունվել է Հայաստանի Հանրապետությունում: Եթե աշխատանքային պայմանագիրը կնքվել է Հայաստանի Հանրապետությունից դուրս այլ վայրում կամ սույն օրենսգրքի 85-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված կարգով փոստային կամ էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով փոխանակելով, կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտն աշխատողին ուղարկվել է սույն մասով սահմանված կապի միջոցներով, ապա աշխատանքային պայմանագիրը կնքված, իսկ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտն ընդունված է համարվում Հայաստանի Հանրապետությունում, եթե՝» բառերը փոխարինել «Աշխատանքային հարաբերությունները համարվում են ծագած Հայաստանի Հանրապետությունում, եթե աշխատանքային պայմանագիրը կնքվել է Հայաստանի Հանրապետությունում: Աշխատանքային պայմանագիրը կնքված է համարվում Հայաստանի Հանրապետությունում նաեւ, եթե՝» բառերով:

4) 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Հանրային պաշտոններ եւ հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց հետ աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով (եթե ոլորտային օրենքներով այլ բան նախատեսված չէ): Սույն մասով սահմանված դեպքում՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով ծագած աշխատանքային հարաբերությունների կարգավորման վրա տարածվում են պայմանագրային հարաբերությունների կարգավորման սույն օրենսգրքի դրույթները:»:

Հոդված 4. Օրենսգրքի 17.1-ին հոդվածում՝

1) 3-րդ մասից հանել «՝ ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկի կամ խնամակալի կամ հոգաբարձուի, իսկ նրանց բացակայության դեպքում՝ մինչեւ տասնվեց տարեկան անձի բնակության վայրի խնամակալության եւ հոգաբարձության մարմնի գրավոր համաձայնությամբ» բառերը.

2) 4-րդ մասում «հոդվածի 1-ին եւ 1.2-րդ մասերին» բառերը փոխարինել «հոդվածին» բառով, «եւ 5-րդ կետերին» բառերը փոխարինել «կետին» բառով, իսկ «101-րդ հոդվածին,» բառերից հետո լրացնել «102.2-րդ հոդվածի 5-րդ մասին,» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 18.1-ին հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով» եւ «կամ որտեղ աշխատողը պետք է գտնվի կամ պետք է ներկայանա՝ իր աշխատանքով պայմանավորված,» բառերը,

2) 2-րդ մասի 1-ին կետից եւ 2-րդ կետի «ա.» պարբերությունից հանել «կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով» բառերը.

3) 2-րդ մասում «աշխատանքի հիմնական վայր (հիմնական աշխատավայր) է» բառերը փոխարինել «աշխատանքային պայմանագրում որպես աշխատանքի վայր (աշխատավայր) է սահմանվում» բառերով.

4) 2-րդ մասի 3-րդ կետից հանել «աշխատանքային պայմանագրով» և «հիմնական» բառերը.

5) 3-րդ մասում «հիմնական վայր (հիմնական աշխատավայր)» բառերը փոխարինել «վայր (աշխատավայր)» բառերով:

Հոդված 6. Օրենսգրքի 84-րդ հոդվածում՝

1) վերնագրում «Աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի, աշխատանքային» բառերը փոխարինել «Աշխատանքային» բառով.

2) 1-ին մասում՝

ա. «Աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտում, աշխատանքային» բառերը փոխարինել «Աշխատանքային» բառով.

բ. 1-ին կետից հանել «անհատական իրավական ակտն ընդունելու,» բառերը.

գ. 3-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«3) գործատուի հարկ վճարողի հաշվառման համարը եւ՝

ա. անվանումը կամ

բ. ֆիզիկական անձ գործատուի անունը, ազգանունը, հայրանունը.».

դ. 6-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«6) պաշտոնի անվանումը եւ՝

ա. աշխատանքային գործառույթները, կամ

բ. հղում պաշտոնից բխող գործառույթները սահմանող փաստաթղթին, որը հանդիսանում է սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված հավելված.».

ե. 8-րդ կետում «աշխատողներին» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» բառերը, իսկ «լրավճարները» բառից հետո լրացնել «: Պետական կամ տարածքային կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, պետական կամ համայնքային կազմակերպություն կամ հիմնարկ չհանդիսացող կազմակերպություններում ցանկության դեպքում, որպես այլ պայման, աշխատանքային պայմանագրում կարող է նշվել նաեւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չնախատեսված լրավճարները» բառերը.

զ. 9-րդ կետից հանել «անհատական իրավական ակտի կամ» բառերը.

է. 13-րդ կետից հանել «անհատական իրավական ակտը կամ» բառերը.

3) 3-րդ մասից հանել «աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտում կամ գրավոր» բառերը եւ նույն մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Այլ պայմանները կարող են լինել հավելվածի տեսքով, որը չի արտացոլվում թվային համակարգում (այդ պարագայում թվային համակարգում նշում է կատարվում, որ աշխատանքային պայմանագիրն ունի հավելված): Աշխատանքային պայմանագրի հավելվածը հանդիսանում է աշխատանքային պայմանագրի անբաժանելի մաս, որը կողմերի համաձայնությամբ կարող է ներառել այլ պայմաններ:»:

Հոդված 7. Օրենսգրքի 85-րդ հոդվածում՝

1) Վերնագրում «պայմանագրի» բառից հետո լրացնել «եւ աշխատանքային պայմանագրի հավելվածի» բառերով:

2) 1-ին եւ 1.2-րդ մասերում «տասնչորս» բառը փոխարինել «տասնվեց» բառով.

3) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«1. Աշխատանքային պայմանագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ կնքվում է թվային համակարգի միջոցով, բացառությամբ սույն հոդվածի 1.7-րդ մասով նախատեսված դեպքի: Աշխատանքային պայմանագիրը կնքվում է՝ կողմերի, իսկ մինչեւ տասնվեց տարեկան աշխատողների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի դեպքում՝ ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկի կամ խնամակալի էլեկտրոնային թվային ստորագրությամբ մեկ էլեկտրոնային պայմանագիր կազմելու միջոցով: Աշխատանքային պայմանագիրն ուժի մեջ է մտնում թվային համակարգի միջոցով այն գործատուի եւ աշխատողի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրելու օրը, եթե այդ պայմանագրով ավելի ուշ ժամկետ սահմանված չէ:».

4) Ուժը կորցրած ճանաչել 1.1-1.3-րդ մասերը:

5) Լրացնել հետեւյալ բովանդակությամբ 1.4-րդ մասով՝

«1.4. Աշխատանքային պայմանագրերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ կարող են կնքվել աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգի միջոցով: Տվյալ դեպքում աշխատանքային պայմանագիրը կնքվում է՝ կողմերի, իսկ մինչեւ տասնվեց տարեկան աշխատողների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի դեպքում՝ ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկի կամ խնամակալի էլեկտրոնային թվային ստորագրությամբ մեկ էլեկտրոնային պայմանագիր կազմելու միջոցով: Աշխատանքային պայմանագիրն ուժի մեջ է մտնում թվային համակարգի միջոցով այն գործատուի եւ աշխատողի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրելու օրը, եթե այդ պայմանագրով ավելի ուշ ժամկետ սահմանված չէ:»:

6) Լրացնել հետեւյալ բովանդակությամբ 1.5-րդ եւ 1.6-րդ մասերով՝

«1.5. Աշխատանքային պայմանագրի հավելվածը կնքվում է երկու օրինակից՝ կողմերի, իսկ մինչեւ տասնվեց տարեկան աշխատողների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի դեպքում՝ ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկի կամ խնամակալի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, որի մեկ օրինակը հավելվածը կնքելուց հետո՝ եռօրյա ժամկետում, գործատուն հանձնում է աշխատողին, իսկ մինչեւ տասնվեց տարեկան անձի մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների ծագման դեպքում՝ ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկին կամ խնամակալին:

1.6. Աշխատանքային պայմանագրի հավելվածը կարող է կնքվել նաեւ փոստային կամ էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով՝ այն կողմերի միջեւ փոխանակելով, որը հնարավորություն է տալիս հաստատելու աշխատանքային պայմանագրի հավելվածի իսկությունը եւ ճշգրիտ որոշելու, որ այն ելնում է աշխատանքային պայմանագրի կողմից: Սույն մասով սահմանված դեպքերում աշխատանքային պայմանագրի հավելվածն ստորագրած կողմը աշխատանքային պայմանագրի հավելվածի մեկ օրինակը մյուս կողմին է

տրամադրում եւ նրա ստորագրելուց հետո այն ստանում է հետեւյալ մեկ կամ մի քանի եղանակներով.

1) աշխատանքային պայմանագրի հավելվածի ստորագրված օրինակը պատվիրված նամակով՝ ստանալու մասին ծանուցմամբ, մյուս կողմի տրամադրած (նշած) գտնվելու կամ բնակության վայր ուղարկելու միջոցով.

2) աշխատանքային պայմանագրի հավելվածի ստորագրված օրինակի արտապատկերումը (ֆաքսիմիլ վերարտադրությունը) ֆաքսիմիլ (հեռապատճենային) կապով ուղարկելու միջոցով.

3) աշխատանքային պայմանագրի հավելվածի ստորագրված եւ էլեկտրոնային պատկերատպված (սկանավորված) օրինակը կամ աշխատանքային պայմանագրի հավելվածի էլեկտրոնային թվային ստորագրությամբ օրինակն էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով (այդ թվում՝ «Ինտերնետով հրապարակային եւ անհատական ծանուցման մասին» օրենքով սահմանված պաշտոնական էլեկտրոնային փոստով) ուղարկելու միջոցով:»:

7) Լրացնել հետեւյալ բովանդակությամբ 1.7-րդ մասով՝

«1.7. Սույն օրենսգրքի 13-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքում գրավոր աշխատանքային պայմանագիրը կնքվում է երկու օրինակից՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, որի մեկ օրինակը աշխատանքային պայմանագիրը կնքելուց հետո՝ եռօրյա ժամկետում, գործատուն հանձնում է աշխատողին:»:

Հոդված 8. Օրենսգրքի 89-րդ հոդվածում՝

1) Ուժը կորցրած ճանաչել 1-ին մասի 5-րդ կետը.

2) 1.1-ին մասում «եւ 5-րդ կետերով» բառերը փոխարինել «կետով» բառով, իսկ «փաստաթղթերը պահպանվում են» բառերը փոխարինել «փաստաթուղթը պահպանվում է» բառերով:

Հոդված 9. Օրենսգրքի 99-րդ հոդվածի 4-րդ մասից հանել «կամ առավել վաղ ընդունված աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի» բառերը:

Հոդված 10. Օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասից հանել «կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի» բառերը:

Հոդված 11. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 13.1-ին գլխով.

«Գ Լ ՈՒ Խ 13.1

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԹՎԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հոդված 102.1. Աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգը եւ համակարգի կիրառման հիմնական սկզբունքները

1. Աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգը (այսուհետեւ՝ թվային համակարգ) տվյալների ամբողջություն է, որի նպատակն է՝

1) ապահովել աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին անհատական իրավական ակտի, ինչպես նաեւ դրանցում փոփոխությունների վերաբերյալ տվյալների մուտքագրմամբ կնքումը (ընդունումը) եւ օգտագործումը, ինչպես նաեւ մուտքագրումից հետո այդ տվյալների ներբեռնելու հնարավորությունը.

2) աջակցել աշխատանքային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողության իրականացմանը:

2. Թվային համակարգի կիրառման հիմնական սկզբունքներն են՝

1) աշխատանքային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության արդյունավետության ապահովումը.

2) թվային համակարգից սույն օրենսգրքով սահմանված կարգով օգտվելու իրավասություն ունեցող աշխատանքային հարաբերությունների կողմերի համար՝ թվային համակարգում առկա տվյալների ցանկացած պահի հասանելիությունը:

Հոդված 102.2. Թվային համակարգի կառավարումը, տվյալներին հասանելիությունը, տեխնիկական պահանջները եւ կառավարման կարգը

1. Թվային համակարգի կառավարումն իրականացնող լիազոր մարմինը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

2. Տեսչական մարմնին տրվում է թվային համակարգի տվյալներին հասանելիություն օրենքով սահմանված կարգով վերահսկողական գործառույթների իրականացման ժամանակ այն ծավալով, որն անհրաժեշտ է՝ աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ եւ աշխատանքային պայմանագրերի պահանջների նկատմամբ օրենսդրությամբ վերապահված լիազորությունների շրջանակում իրականացվող վերահսկողության համար:

3. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի համապատասխան ստորաբաժանումներին տրվում է թվային համակարգի տվյալներին հասանելիություն այն ծավալով, որն անհրաժեշտ է աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով ձեւակերպելու կամ աշխատողի համար գրանցման հայտ

ներկայացնելու ճշտության ստուգումներ, ինչպես նաեւ աշխատողի համար հաշվարկված եւ վճարված եկամուտների, հաշվարկված (վճարված) եկամտային հարկի, սոցիալական եւ պարտադիր այլ վճարների համապատասխանության նկատմամբ հարկային հսկողություն իրականացնելու համար՝ օրենսդրությամբ վերապահված լիազորությունների շրջանակում:

4. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայությանը թվային համակարգի օտարերկրյա աշխատողի տվյալներին հասանելիություն տրվում է այն ծավալով, որն անհրաժեշտ է օտարերկրյա աշխատողի ներգրավման https://workpermit.am միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ներկայացված դիմումների հիման վրա հարուցված վարչական վարույթի ընթացքն ապահովելու համար:

5. Թվային համակարգում գործատուին եւ աշխատողին տրվում է էլեկտրոնային տվյալներին հասանելիության պատուհան (անձնական էջ): Մինչեւ տասնվեց տարեկան անձի մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների ծագման դեպքում՝ էլեկտրոնային տվյալներին հասանելիությունը տրվում է աշխատանքային պայմանագիրը կնքող ծնողին կամ խնամատար ծնողին կամ որդեգրողին կամ խնամակալին:

6. Թվային համակարգին ներկայացվող պահանջները, թվային համակարգի տվյալներին հասանելիություն տրամադրելու եւ թվային համակարգով աշխատանքային պայմանագրերի կնքման կարգերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 12. Օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետում «5» թիվը փոխարինել «4» թվով:

Հոդված 13. Օրենսգրքի 139-րդ հոդվածի 5-րդ մասից հանել «, բացառությամբ այն դեպքի, երբ գործատուն աշխատողի կողմից գրավոր տեղեկացվել է աշխատողի համատեղությամբ աշխատելու վերաբերյալ» բառերը:

Հոդված 14. Օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասից հանել «կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով» բառերը:

Հոդված 15. Օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ եւ 4-րդ մասերից հանել «կամ աշխատանքի ընդունման մասին իրավական ակտով» բառերը:

Հոդված 16. Օրենսգրքի 216-րդ հոդվածից հանել «(կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով)» բառերը:

Հոդված 17. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հուլիսի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ եւ 4-րդ կետերի, 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 3-րդ կետերի, 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-4-րդ եւ 7-րդ կետերի:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ եւ 4-րդ կետերը, 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 3-րդ կետերը, 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-4-րդ եւ 7-րդ կետերն ուժի մեջ են մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:

3. Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 7-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը գործում են մինչեւ 2026 թվականի հունվարի 1-ը:

4. 2026 թվականի հունվարի 1-ից հետո՝ տասներկուամսյա ժամկետում, գործատուները թվային համակարգ են մուտքագրում իրենց հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող աշխատողների աշխատանքային պայմանագրերը (եթե աշխատանքային պայմանագրերը չեն կնքվել թվային համակարգի միջոցով)՝ մուտքագրման պահին գործող պայմաններով: Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը կնքված եւ շարունակվող աշխատանքային պայմանագրերի թվային համակարգ մուտքագրելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելն աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով ծագած աշխատանքային հարաբերությունները շարունակվում են այդ իրավական ակտով եւ դրանց նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի դրույթները:

6. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են մինչեւ 2025 թվականի մարտի 1-ը, բացառությամբ սույն օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի, որն ընդունվում է մինչեւ 2026 թվականի հունվարի 1-ը:

Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-907-03.09.2024-ԱՍ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2004 թվականի նոյեմբերի 9-ի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի (այսուհետեւ՝ Օրենսգիրք) 5-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասից հանել «Աշխատանքի ընդունման, ինչպես նաեւ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին անհատական իրավական ակտի մեկ օրինակը հանձնվում է աշխատողին այն ընդունելուց հետո՝ երեք օրվա ընթացքում:» նախադասությունը.

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4.1-ին մասով՝

«4.1. Աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին անհատական իրավական ակտն աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգի ~~(այսուհետեւ՝ թվային համակարգ)~~ միջոցով ընդունելուց հետո՝ երեք օրվա ընթացքում ակտի օրինակն աշխատանքային պայմանագրում սահմանված ծանուցման եղանակով ուղարկվում է աշխատողին:»:

3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4.2-րդ մասով՝

«4.2. Եթե աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին անհատական իրավական ~~ակտը~~ ակտն աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգի միջոցով չի ընդունվում, ապա ակտի մեկ օրինակը հանձնվում է աշխատողին այն ընդունելուց հետո՝ երեք օրվա ընթացքում:»:

4) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4.3-րդ մասով՝

«4.3. Սույն օրենսգրքի 13-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաեւ 14-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում աշխատանքի ընդունման, ինչպես նաեւ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին անհատական իրավական ակտի մեկ օրինակը հանձնվում է աշխատողին այն ընդունելուց հետո՝ երեք օրվա ընթացքում:»:

Հոդված 2. Օրենսգրքի 13-րդ հոդվածի՝

1) 1-ին պարբերության «Աշխատանքային» բառից առաջ լրացնել «1.» թիվը.

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 2-րդ մասով.

«2. Աշխատանքային հարաբերությունների ծագումը, փոփոխումը եւ դադարումը կարող է իրականացվել նաեւ թվային համակարգի միջոցով:»:

3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Աշխատանքային հարաբերությունների ծագումը, փոփոխումը եւ դադարումն իրականացվում է թվային համակարգի միջոցով, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաեւ սույն օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի:»:

4) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Եթե պետական մարմիններում առանձին պաշտոնների վերաբերյալ տեղեկությունների հրապարակման սահմանափակումներով պայմանավորված անձին վերաբերող տեղեկություններն օրենսդրությամբ սահմանված են որպես գաղտնի կամ սահմանափակ տարածման ծառայողական տեղեկություններ, ապա վերջիններիս հետ աշխատանքային հարաբերությունների ծագումը, փոփոխումը եւ դադարումն իրանականացվում է գրավոր՝ թղթային եղանակով:»:

Հոդված 3. Օրենսգրքի 14-րդ հոդվածում՝

1) 1-ին ~~մասից հանել~~մասում «կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով» բառերը փոխարինել «, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի» բառերով.

2) 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ՝

«Սույն օրենսգրքի 13-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքում աշխատողի եւ գործատուի միջեւ աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով:»:

3) 1.1-ին մասում «Աշխատանքային հարաբերությունները համարվում են ծագած Հայաստանի Հանրապետությունում, եթե աշխատանքային պայմանագիրը կնքվել, կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտն ընդունվել է Հայաստանի Հանրապետությունում: Եթե աշխատանքային պայմանագիրը կնքվել է Հայաստանի Հանրապետությունից դուրս այլ վայրում կամ սույն օրենսգրքի 85-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված կարգով փոստային կամ էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով փոխանակելով, կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտն աշխատողին ուղարկվել է սույն մասով սահմանված կապի միջոցներով, ապա աշխատանքային պայմանագիրը կնքված, իսկ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտն

ընդունված է համարվում Հայաստանի Հանրապետությունում, եթե՝» բառերը փոխարինել «Աշխատանքային հարաբերությունները համարվում են ծագած Հայաստանի Հանրապետությունում, եթե աշխատանքային պայմանագիրը կնքվել է Հայաստանի Հանրապետությունում: Աշխատանքային պայմանագիրը կնքված է համարվում Հայաստանի Հանրապետությունում նաեւ, եթե՝» բառերով:

4) 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Հանրային պաշտոններ եւ հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց հետ աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով (եթե ոլորտային օրենքներով այլ բան նախատեսված չէ): Սույն մասով սահմանված դեպքում՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով ծագած աշխատանքային հարաբերությունների կարգավորման վրա տարածվում են պայմանագրային հարաբերությունների կարգավորման սույն օրենսգրքի դրույթները:»:

Հոդված 4. Օրենսգրքի 17.1-ին հոդվածում՝

1) 3-րդ մասից հանել «՝ ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկի կամ խնամակալի կամ հոգաբարձուի, իսկ նրանց բացակայության դեպքում՝ մինչեւ տասնվեց տարեկան անձի բնակության վայրի խնամակալության եւ հոգաբարձության մարմնի գրավոր համաձայնությամբ» բառերը.

2) 4-րդ մասում «հոդվածի 1-ին եւ 1.2-րդ մասերին» բառերը փոխարինել «հոդվածին» բառով, «եւ 5-րդ կետերին» բառերը փոխարինել «կետին» բառով, իսկ «101-րդ հոդվածին,» բառերից հետո լրացնել «102.2-րդ հոդվածի 5-րդ մասին,» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 18.1-ին հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով» եւ «կամ որտեղ աշխատողը պետք է գտնվի կամ պետք է ներկայանա՝ իր աշխատանքով պայմանավորված,» բառերը,

2) 2-րդ մասի 1-ին կետից եւ 2-րդ կետի «ա.» պարբերությունից հանել «կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով» բառերը.

3) 2-րդ մասում «աշխատանքի հիմնական վայր (հիմնական աշխատավայր) է» բառերը փոխարինել «աշխատանքային պայմանագրում որպես աշխատանքի վայր (աշխատավայր) է սահմանվում» բառերով.

4) ~~ուժը կորցրած ճանաչել 2-րդ մասի 3-րդ կետը~~2-րդ մասի 3-րդ կետից հանել «աշխատանքային պայմանագրով» և «հիմնական» բառերը.

~~5) լրացնել նոր 2.1-ին մասով հետեւյալ բովանդակությամբ՝~~

~~«2.1. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով հնարավոր չէ որոշել աշխատանքի վայրը (աշխատավայրը), ապա այն սահմանվում է կողմերի համաձայնությամբ:».~~

~~6~~5) 3-րդ մասում «հիմնական վայր (հիմնական աշխատավայր)» բառերը փոխարինել «վայր (աշխատավայր)» բառերով:

Հոդված 6. Օրենսգրքի 84-րդ հոդվածում՝

1) վերնագրում «Աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի, աշխատանքային» բառերը փոխարինել «Աշխատանքային» բառով.

2) 1-ին մասում՝

ա. «Աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտում, աշխատանքային» բառերը փոխարինել «Աշխատանքային» բառով.

բ. 1-ին կետից հանել «անհատական իրավական ակտն ընդունելու,» բառերը.

գ. 3-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«3) գործատուի հարկ վճարողի հաշվառման համարը եւ՝

ա. անվանումը կամ

բ. ֆիզիկական անձ գործատուի անունը, ազգանունը, հայրանունը.».

դ. 6-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«6) պաշտոնի անվանումը եւ՝

ա. աշխատանքային գործառույթները, կամ

բ. հղում պաշտոնից բխող գործառույթները սահմանող փաստաթղթին, որը հանդիսանում է սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված հավելված.».

ե. 8-րդ կետում «աշխատողներին» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» բառերը, իսկ «լրավճարները» բառից հետո լրացնել «: Պետական կամ տարածքային կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, պետական կամ համայնքային կազմակերպություն կամ հիմնարկ չհանդիսացող կազմակերպություններում ցանկության դեպքում, որպես այլ պայման, աշխատանքային պայմանագրում կարող է նշվել նաեւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չնախատեսված լրավճարները» բառերը.

զ. 9-րդ կետից հանել «անհատական իրավական ակտի կամ» բառերը.

է. 13-րդ կետից հանել «անհատական իրավական ակտը կամ» բառերը.

3) 3-րդ մասից հանել «աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտում կամ գրավոր» բառերը եւ նույն մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր

նախադասությունով. «Այլ պայմանները կարող են լինել հավելվածի տեսքով, որը չի արտացոլվում թվային համակարգում (այդ պարագայում թվային համակարգում նշում է կատարվում, որ աշխատանքային պայմանագիրն ունի հավելված): Աշխատանքային պայմանագրի հավելվածը հանդիսանում է աշխատանքային պայմանագրի անբաժանելի մաս, որը կողմերի համաձայնությամբ կարող է ներառել այլ պայմաններ:»:

Հոդված 7. Օրենսգրքի 85-րդ հոդվածում՝

1) Վերնագրում «պայմանագրի» բառից հետո լրացնել «եւ աշխատանքային պայմանագրի հավելվածի» բառերով:

2) 1-ին եւ 1.2-րդ մասերում «տասնչորս» բառը փոխարինել «տասնվեց» բառով.

3) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«1. Աշխատանքային պայմանագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ կնքվում է թվային համակարգի միջոցով, բացառությամբ սույն հոդվածի 1.7-րդ մասով նախատեսված դեպքի: Աշխատանքային պայմանագիրը կնքվում է՝ կողմերի, իսկ մինչեւ տասնվեց տարեկան աշխատողների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի դեպքում՝ ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկի կամ խնամակալի էլեկտրոնային թվային ստորագրությամբ մեկ էլեկտրոնային պայմանագիր կազմելու միջոցով: Աշխատանքային պայմանագիրն ուժի մեջ է մտնում թվային համակարգի միջոցով այն գործատուի եւ աշխատողի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրելու օրը, եթե այդ պայմանագրով ավելի ուշ ժամկետ սահմանված չէ:».

4) Ուժը կորցրած ճանաչել 1.1-1.3-րդ մասերը:

5) Լրացնել հետեւյալ բովանդակությամբ 1.4-րդ մասով՝

«1.4. Աշխատանքային պայմանագրերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ կարող են կնքվել աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգի միջոցով: Տվյալ դեպքում աշխատանքային պայմանագիրը կնքվում է՝ կողմերի, իսկ մինչեւ տասնվեց տարեկան աշխատողների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի դեպքում՝ ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկի կամ խնամակալի էլեկտրոնային թվային ստորագրությամբ մեկ էլեկտրոնային պայմանագիր կազմելու միջոցով: Աշխատանքային պայմանագիրն ուժի մեջ է մտնում թվային համակարգի միջոցով այն գործատուի եւ աշխատողի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրելու օրը, եթե այդ պայմանագրով ավելի ուշ ժամկետ սահմանված չէ:»:

6) Լրացնել հետեւյալ բովանդակությամբ 1.5-րդ եւ 1.6-րդ մասերով՝

«1.5. Աշխատանքային պայմանագրի հավելվածը կնքվում է երկու օրինակից՝ կողմերի, իսկ մինչեւ տասնվեց տարեկան աշխատողների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի դեպքում՝ ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկի կամ խնամակալի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, որի մեկ օրինակը հավելվածը կնքելուց հետո՝ եռօրյա ժամկետում, գործատուն հանձնում է աշխատողին, իսկ մինչեւ տասնվեց տարեկան անձի մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների ծագման դեպքում՝ ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկին կամ խնամակալին:

1.6. Աշխատանքային պայմանագրի հավելվածը կարող է կնքվել նաեւ փոստային կամ էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով՝ այն կողմերի միջեւ փոխանակելով, որը հնարավորություն է տալիս հաստատելու աշխատանքային պայմանագրի հավելվածի իսկությունը եւ ճշգրիտ որոշելու, որ այն ելնում է աշխատանքային պայմանագրի կողմից: Սույն մասով սահմանված դեպքերում աշխատանքային պայմանագրի հավելվածն ստորագրած կողմը աշխատանքային պայմանագրի հավելվածի մեկ օրինակը մյուս կողմին է տրամադրում եւ նրա ստորագրելուց հետո այն ստանում է հետեւյալ մեկ կամ մի քանի եղանակներով.

1) աշխատանքային պայմանագրի հավելվածի ստորագրված օրինակը պատվիրված նամակով՝ ստանալու մասին ծանուցմամբ, մյուս կողմի տրամադրած (նշած) գտնվելու կամ բնակության վայր ուղարկելու միջոցով.

2) աշխատանքային պայմանագրի հավելվածի ստորագրված օրինակի արտապատկերումը (ֆաքսիմիլ վերարտադրությունը) ֆաքսիմիլ (հեռապատճենային) կապով ուղարկելու միջոցով.

3) աշխատանքային պայմանագրի հավելվածի ստորագրված եւ էլեկտրոնային պատկերատպված (սկանավորված) օրինակը կամ աշխատանքային պայմանագրի հավելվածի էլեկտրոնային թվային ստորագրությամբ օրինակն էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով (այդ թվում՝ «Ինտերնետով հրապարակային եւ անհատական ծանուցման մասին» օրենքով սահմանված պաշտոնական էլեկտրոնային փոստով) ուղարկելու միջոցով:»:

7) Լրացնել հետեւյալ բովանդակությամբ 1.7-րդ մասով՝

«1.7. Սույն օրենսգրքի 13-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքում գրավոր աշխատանքային պայմանագիրը կնքվում է երկու օրինակից՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, որի մեկ օրինակը աշխատանքային պայմանագիրը կնքելուց հետո՝ եռօրյա ժամկետում, գործատուն հանձնում է աշխատողին:»:

Հոդված 8. Օրենսգրքի 89-րդ հոդվածում՝

1) Ուժը կորցրած ճանաչել 1-ին մասի 5-րդ կետը.

2) 1.1-ին մասում «եւ 5-րդ կետերով» բառերը փոխարինել «կետով» բառով, իսկ «փաստաթղթերը պահպանվում են» բառերը փոխարինել «փաստաթուղթը պահպանվում է» բառերով:

Հոդված 9. Օրենսգրքի 99-րդ հոդվածի 4-րդ մասից հանել «կամ առավել վաղ ընդունված աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի» բառերը:

Հոդված 10. Օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասից հանել «կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի» բառերը:

Հոդված 11. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 13.1-ին գլխով.

«Գ Լ ՈՒ Խ 13.1

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԹՎԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հոդված 102.1. Աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգը եւ համակարգի կիրառման հիմնական սկզբունքները

1. Աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգը (այսուհետեւ՝ թվային համակարգ) տվյալների ամբողջություն է, որի նպատակն է՝

1) ապահովել աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին անհատական իրավական ակտի, ինչպես նաեւ դրանցում փոփոխությունների վերաբերյալ տվյալների մուտքագրմամբ կնքումը (ընդունումը) եւ օգտագործումը, ինչպես նաեւ մուտքագրումից հետո այդ տվյալների ~~տպելու~~ ներբեռնելու հնարավորությունը.

2) աջակցել աշխատանքային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողության իրականացմանը:

2. Թվային համակարգի կիրառման հիմնական սկզբունքներն են՝

1) աշխատանքային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության արդյունավետության ապահովումը.

2) թվային համակարգից սույն օրենսգրքով սահմանված կարգով օգտվելու իրավասություն ունեցող աշխատանքային հարաբերությունների կողմերի համար՝ թվային համակարգում առկա տվյալների ցանկացած պահի հասանելիությունը:

Հոդված 102.2. Թվային համակարգի կառավարումը, տվյալներին հասանելիությունը, տեխնիկական պահանջները եւ կառավարման կարգը

1. Թվային համակարգի կառավարումն իրականացնող լիազոր մարմինը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

2. Տեսչական մարմնին տրվում է թվային համակարգի տվյալներին հասանելիություն օրենքով սահմանված կարգով վերահսկողական գործառույթների իրականացման ժամանակ այն ծավալով, որն անհրաժեշտ է՝ աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ եւ աշխատանքային պայմանագրերի պահանջների նկատմամբ օրենսդրությամբ վերապահված լիազորությունների շրջանակում իրականացվող վերահսկողության համար:

3. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի համապատասխան ստորաբաժանումներին տրվում է թվային համակարգի տվյալներին հասանելիություն այն ծավալով, որն անհրաժեշտ է աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով ձեւակերպելու կամ աշխատողի համար գրանցման հայտ ներկայացնելու ճշտության ստուգումներ, ինչպես նաեւ աշխատողի համար հաշվարկված եւ վճարված եկամուտների, հաշվարկված (վճարված) եկամտային հարկի, սոցիալական եւ պարտադիր այլ վճարների համապատասխանության նկատմամբ հարկային հսկողություն իրականացնելու համար՝ օրենսդրությամբ վերապահված լիազորությունների շրջանակում:

4. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայությանը թվային համակարգի օտարերկրյա աշխատողի տվյալներին հասանելիություն տրվում է այն ծավալով, որն անհրաժեշտ է օտարերկրյա աշխատողի ներգրավման https://workpermit.am միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ներկայացված դիմումների հիման վրա հարուցված վարչական վարույթի ընթացքն ապահովելու համար:

5. Թվային համակարգում գործատուին եւ աշխատողին տրվում է էլեկտրոնային տվյալներին հասանելիության պատուհան (անձնական էջ): Մինչեւ տասնվեց տարեկան անձի մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների ծագման դեպքում՝ էլեկտրոնային

տվյալներին հասանելիությունը տրվում է աշխատանքային պայմանագիրը կնքող ծնողին կամ խնամատար ծնողին կամ որդեգրողին կամ խնամակալին:

6. Թվային համակարգին ներկայացվող ~~տեխնիկական~~ պահանջները, թվային համակարգի տվյալներին հասանելիություն տրամադրելու եւ թվային համակարգով աշխատանքային պայմանագրերի կնքման կարգերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 12. Օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետում «5» թիվը փոխարինել «4» թվով:

Հոդված 13. Օրենսգրքի 139-րդ հոդվածի 5-րդ մասից հանել «, բացառությամբ այն դեպքի, երբ գործատուն աշխատողի կողմից գրավոր տեղեկացվել է աշխատողի համատեղությամբ աշխատելու վերաբերյալ» բառերը:

Հոդված 14. Օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասից հանել «կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով» բառերը:

Հոդված 15. Օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ եւ 4-րդ մասերից հանել «կամ աշխատանքի ընդունման մասին իրավական ակտով» բառերը:

Հոդված 16. Օրենսգրքի 216-րդ հոդվածից հանել «(կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով)» բառերը:

Հոդված 17. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հուլիսի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ եւ 4-րդ կետերի, 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 3-րդ կետերի, 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-4-րդ եւ 7-րդ կետերի:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ եւ 4-րդ կետերը, 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 3-րդ կետերը, 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-4-րդ եւ 7-րդ կետերն ուժի մեջ են մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:

3. Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 7-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը գործում են մինչեւ 2026 թվականի հունվարի 1-ը:

4. 2026 թվականի հունվարի 1-ից հետո՝ տասներկուամսյա ժամկետում, գործատուները թվային համակարգ են մուտքագրում իրենց հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող աշխատողների աշխատանքային պայմանագրերը (եթե աշխատանքային պայմանագրերը չեն կնքվել թվային համակարգի միջոցով)՝ մուտքագրման պահին գործող պայմաններով: Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը կնքված եւ շարունակվող աշխատանքային պայմանագրերի թվային համակարգ մուտքագրելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելն աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով ծագած աշխատանքային հարաբերությունները շարունակվում են այդ իրավական ակտով եւ դրանց նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի դրույթները:

6. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են մինչեւ 2025 թվականի մարտի 1-ը, բացառությամբ սույն օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի, որն ընդունվում է մինչեւ 2026 թվականի հունվարի 1-ը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-907-03.09.2024-ԱՍ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխությունը, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարությունն	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետ	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետով Աշխատանքային օրենսգրքի (այսուհետև՝ Օրենսգիրք) 5-րդ հոդվածում լրացվող 4.1-ին մասում առաջարկվում է՝ «(այսուհետեւ՝ թվային համակարգ)» բառերը հանել: Հաշվի առնելով այն, որ Նախագծի 11-րդ հոդվածով Օրենսգրքում նոր լրացվող 13-րդ գլուխը վերաբերում է աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգին, ուստի նպատակահարմար է «(այսուհետեւ՝ թվային համակարգ)» բառերը լրացնել 102.1-ին հոդվածի 1-ին մասում:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**

2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետ	Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետով Օրենսգրքի 5-րդ հոդվածում լրացվող 4.2-րդ մասում առաջարկվում է՝ «ակտը» բառը փոխարինել «ակտն աշխատանքային պայմանագրերի կնքման» բառերով: Փոփոխությունը պայմանավորված է սույն ամփոփաթերթի 1-ին կետում ներկայացված առաջարկության հիման վրա կատարվող փոփոխությամբ:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին կետ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին կետում առաջարկվում է՝ «մասից հանել» բառերը փոխարինել «մասում» բառով, իսկ «բառերը» բառից հետո լրացնել «փոխարինել «, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի» բառերով» բառերով: Հաշվի առնելով, որ Օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասը նոր խմբագրությամբ է շարադրվում, որի արդյունքում հանրային պաշտոններ եւ հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց հետ աշխատանքային հարաբերությունները ծագելու են աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով (եթե ոլորտային օրենքներով այլ բան նախատեսված չէ), ուստի նպատակահարմար է Օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել «,	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**

			բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի» բառերով, հնարավոր տարընկալումներից խուսափելու նպատակով:		
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 5-րդ հոդվածի 4-րդ կետ	Նախագծի 5-րդ հոդվածի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «2-րդ մասի 3-րդ կետից հանել «աշխատանքային պայմանագրով» և «հիմնական» բառերը:»: Հաշվի առնելով այն, որ գործող օրենսդրական կարգավորումները առավել լիարժեք են սահմանում կողմերի միջև ձեռք բերվող համաձայնության ամրագրման ձևը, այն է՝ աշխատանքային պայմանագիրը, ուստի քննարկումների արդյունքում որոշվել է Օրենսգրքի 18.1-ին հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչելու փոխարեն՝ լրամշակել, որի արդյունքում Նախագծի 5-րդ հոդվածի 5-րդ կետով կատարվող փոփոխության անհրաժեշտությունը բացակայում է:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**
5.	ՀՀ կառավարություն	Նախագծի 5-րդ հոդվածի 5-րդ կետ	Նախագծի 5-րդ հոդվածի 5-րդ կետով կատարվող փոփոխությունը հանել: Փոփոխությունը պայմանավորված է սույն ամփոփաթերթի 4-րդ կետում ներկայացված առաջարկով, հաշվի առնելով, որ Նախագծի 5-րդ հոդվածի 4-րդ կետով Օրենսգրքի 18.1-ին	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**

			հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետն ուժը կորցրած չի ճանաչվում:		
6.	ՀՀ կառավարություն	Նախագծի 5-րդ հոդվածի 6-րդ կետ	Ամփոփաթերթի 5-րդ կետով տրված առաջարկով պայմանավորված Նախագծի 5-րդ հոդվածի 6-րդ կետի համարակալումը փոխել «5)»:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**
7.	ՀՀ կառավարություն	Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ կետ	Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ կետը լրացնել նոր ենթակետով հետևյալ բովանդակությամբ՝ «է. 13-րդ կետից հանել «անհատական իրավական ակտը կամ» բառերը.»: Սույն փոփոխությունը կատարվել է հաշվի առնելով այն, որ սույն Նախագծով Օրենսգրքում փոփոխություն է կատարվում և բոլոր հոդվածներից հանվում է աշխատանքային հարաբերությունների ծագման հիմք հանդիսացող «անհատական իրավական ակտ» եզրույթը:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**
8.	ՀՀ կառավարություն	Նախագծի 6-րդ հոդվածի 3-րդ կետ	Նախագծի 6-րդ հոդվածի 3-րդ կետով Օրենսգրքի 84-րդ հոդվածի 3-րդ մասում լրացվող նոր նախադասությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ «Աշխատանքային պայմանագրի հավելվածը հանդիսանում է աշխատանքային պայմանագրի անբաժանելի մաս, որը	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**

			կողմերի համաձայնությամբ կարող է ներառել այլ պայմաններ:»: Փոփոխության առաջարկը հստակեցնող է:		
9.	ՀՀ կառավարություն	Նախագծի 11-րդ հոդված	Նախագծի 11-րդ հոդվածով Օրենսգրքում նոր լրացվող՝ 1) 102.1-ին հոդվածի 1-ին մասում «թվային համակարգը» բառերից հետո լրացնել «(այսուհետեւ՝ թվային համակարգ)» բառերը. Փոփոխությունը տեխնիկական է (տե՛ս սույն ամփոփաթերթի 1-ին կետով տրված առաջարկը): 2) 102.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «տպելու» բառը փոխարինել «ներբեռնելու» բառով, որպեսզի հնարավորություն տրվի աշխատողների աշխատանքային պայմանագիրը ներբեռնել, ցանկացած նպատակով օգտագործելու համար, այդ թվում՝ տպելու: 3) 102.2-րդ հոդվածի 6-րդ մասից հանել «տեխնիկական» բառը: Փոփոխությունը պայմանավորված է լիազորող նորմի բովանդակության հետ, որպեսզի հետագայում լիազորող նորմով սահմանվի թվային համակարգին ներկայացվող պահանջների վերաբերյալ կարգավորումներ, իսկ թվային համակարգի տեխնիկական	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է:**

			պահանջները կսահմանվի տեխնիկական բնութագրով:		